ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅՈՎՆԱՆ ԼԱԼԱՅԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ, մեծարգոյ պրն. Լալայեան, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով ծանօթ ենք Ձեր երկարամեայ գործունէութեանը, որ պատիւ է բերում Ձեզ՝ որպէս ազգանուէր ու եկեղեցասէր հայորդի: Գնահատարժան է, որ Ռուսաստանում Ձեր գործունէութեանը զուգընթաց Դուք տնտեսական ծրագրեր էք իրականացրել նաեւ Հայրենի մեր երկրում՝ նպաստելով մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին:

Ուրախ ենք նաեւ անդրադառնալու, որ Դուք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին բերած Ձեր աջակցութեամբ կարելին ի սպաս էք դրել մեր Սուրբ Եկեղեցու շնորհակալ առաքելութեան իրականացմանը՝ ի բարօրութիւն ռուսահայ Մեր զաւակների: Լուսահոգի Ձեր ծնողի օրինակով Դուք հոգու ողջ նուիրումով շինարարի Ձեր մասնագիտական կարողութիւնները եւ նիւթական ընծայաբերումները ծառայեցնում էք յանուն Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման աստուածահաճոյ գործի: Առ Աստուած փառաբանութիւնն է Մեր հոգում, որ հակառակ ժամանակի բոլոր դժուարութիւնների, հայորդիներիդ հաւատի ու զոհողութեան ոգու շնորհիւ կառուցուեց սուրբ եկեղեցին՝ սերնդէ-սերունդ իր յարկերի ներքոյ միաւորելու ազգիս զաւակներին՝ աղօթքներ ու շարականներ հնչեցնելու եւ Տիրոջ օրհնութեանն ու շնորհներին արժանանալու:

Մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Թեմական Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք

հայցում Ձեզ՝ յեւրայսու եւս շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր Հայրենիքին, հաւատաւոր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարաւորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 776